

23.05.2024 14:48



Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը Երեխաների իրավունքների պաշտպանության տոնին ընդառաջ 7-ից 15 տարեկան երեխաների համար հայտարարում է «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ» խորագրով շարադրությունների մրցույթ:

Շարադրությունները չունեն տեքստային կամ քանակական սահմանափակում:

Խնդրում ենք աշխատանքներն ուղարկել [press@advocates.am](mailto:press@advocates.am) հասցեին **մինչև մայիսի 29-ը**` ստեղծագործական աշխատանքին կից նշելով երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, դպրոցի անվանումը, դասարանը և հեռախոսահամար:

Արդյունքները ստուգվելու են Երևանի պետական համալսարանի բանասիրության և Հայ-Ռուսական համալսարանի Ժուռնալիստիկայի ամբիոնի մասնագետների կողմից և անաչառության սկզբունքը պահպանելու համար ստուգող հանձնաժողովում չի լինելու ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչ:

Լավագույն շարադրությունների հեղինակներին մրցանակները կհանձնվեն հունիսի մեկին կայանալիք միջոցառումների ընթացքում:

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Սիլվիա Տիգրանյանի հետ` 010 600 704 (ներքին համար` 113) կամ 077 96 06 37 հեռախոսահամարներով:

Մաղթում ենք հաջողություն Ձեր երեխային:

**Հարգանքով`**

**ՀՀ փաստաբանների պալատի մամուլի ծառայություն**